ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 36-Ա

«03» հուլիսի 2018 թվական գյուղ Թորոսգյուղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել Հայաստան Հանրապետության Շիրակի մարզի Սարապատի համայնքապետարանի աշխատակազմում քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«03» հուլիս 2018 թվական
գյուղ Թորոսգյուղ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Սարապատ համայնքի ղեկավարի
2018թ. հուլիսի 3-ի թիվ 36-Ա որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1. Սույնով կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի ղեկավարի և համայնքապետարանի աշխատակազմի պաշտոնատար անձանց կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը, որով նախատեսվում է անձանց իրավունքների և շահերի խախտման փաստերին արձագանքելու, խախտումները վերացնելու և կանխելու առնչությամբ ծագող հարաբերությունների քննարկումը, ինչպես նաև քաղաքացիների ընդունելության վերաբերյալ հանրության իրազեկումը, ընդունելությունների ժամանակ քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի հաշվառումը, գրանցամատյանի վարումը, քաղաքացիներին հետաքրքրող խնդիրների, սոցիալական և հասարակական կյանքի ոլորտների վերաբերվող հարցերի, դիմումների, բողոքների ու հանրագրերի ուսումնասիրությունը:

II. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի ղեկավարի մոտ քաղաքացիների ընդունելության նախապատրաստումը և կազմակերպումը իրականացնում է աշխատակազմի քարտուղարը:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի ղեկավարի մոտ քաղաքացիների ընդունելությունների հերթագրումն իրականացվում է աշխատակազմի առաջատար մասնագետի կողմից՝ քաղաքացիների դիմումների հիման վրա, որոնք գրանցվում են ընդունելության հաշվառման գրանցամատյանում: Ընդունելության օրվանից 3 օր առաջ քաղաքացիներին տեղյակ է պահվում նրանց ընդունելության ժամի մասին:
3. Ընդունելություններին հերթագրվելու համար քաղաքացիները կարող են նաև դիմել փոստով 2804 Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ գյուղ Թորոսգյուղ, 1-ին փողոց, 7 շենք, կամ էլեկտրոնային փոստով sarapat.shirak@mta.gov.am:
4. Ընդունելության ժամանակ քաղաքացիների բարձրացրած հարցերը, համայնքի ղեկավարի կողմից աշխատակազմի աշխատակիցներին տրված հանձնարարությունները, առաջարկությունները, միջնորդությունները, անձանց իրավունքների և շահերի խախտման փաստերը ուսումնասիրելու, ժամանակին ու համակողմանի քննարկելու համար ընդունելության ընթացքը արձանագրում և հաշվառում է աշխատակազմի առաջատար մասնագետը, դրանց կատարման նկատմամբ հսկողությունը վերապահվում է աշխատակազմի քարտուղարին:
5. Ընդունելության կազմակերպման կարգի, ընդունելության օրերի և ժամերի մասին իրազեկումը տեղադրվում է համայնքի ղեկավարի նստավայրում՝ շենքի առաջին հարկում, տեսանելի ցուցանակի վրա և ինտերնետային www.sarapat.am պաշտոնական կայք էջում:
6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի ղեկավարն անձամբ քաղաքացիների ընդունելությունն իրականացնում է **յուրաքանչյուր շաբաթվա**

երկուշաբթի և հինգշաբթի օրերին, ժամը 14:00-ից: Ընդունելության օրվա փոփոխության դեպքում անմիջապես այդ մասին տեղեկացվում է հանրությանը:

7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի ղեկավարի տեղակալի, աշխատակազմի քարտուղարի, օգնականի կողմից քաղաքացիների ընդունելությունը կազմակերպվում է ամենօրյա աշխատանքային գործունեության հետ միաժամանակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 37

«03» հուլիսի 2018 թվական գյուղ Թորոսգյուղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ՈՍԿԵՀԱՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով և 24-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 50-Ն որոշման հավելվածի 16-րդ կետի՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի Թորոսգյուղ բնակավայրի 100 /հարյուր/ ամյա բնակչուհի Ոսկեհատ Մանուկյանին 100 ամյակի առթիվ տրամադրել միանվագ դրամական օգնություն 50.000 /հիսուն հազար/ դրամի չափով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«03» հուլիսի 2018 թվական
գյուղ Թորոսգյուղ